

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ՁԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ԱՆՑԿԱՑՄԱՆ

(«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻՑ)

Հարց 1. Որ համակարգում է գործում քրեակատարողական ծառայությունը

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված)

Հարց 2. Ինչ ծառայող է հանդիսանում քրեակատարողական ծառայությունում ծառայող քաղաքացին՝

պետական ծառայող

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված)

Հարց 3. Որն է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմինը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված)

Հարց 4. Ինչպիսի հիմնարկ է Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության քրեակատարողական վարչությունը

պետական հիմնարկ է, որը գործում է «Քրեակատարողական ծառայության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքին եւ իր կանոնադրությանը համապատասխան

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված)

Հարց 5. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչության կանոնադրությունը հաստատում է

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված)

Հարց 6. Որոնք են քրեակատարողական հիմնարկները՝

ուղղիչ հիմնարկները եւ կալանավորվածներին պահելու վայրերը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված)

Հարց 7. Ով է սահմանում քրեակատարողական հիմնարկների տեսակները եւ լրակազմերը

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ քրեակատարողական վարչության պետի ներկայացմամբ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված)

Հարց 8. Քրեակատարողական հիմնարկները ստեղծում, վերակազմակերպում եւ դրանց գործունեությունը դադարեցնում է

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված)

Հարց 9. Ինչպիսի հիմնարկ է քրեակատարողական հիմնարկը՝

պետական հիմնարկ է, որը գործում է «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին եւ իր կանոնադրությանը համապատասխան

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված)

Հարց 10. Քրեակատարողական ծառայության պաշտոնները աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, դասակարգվում են՝

ըստ բարձրագույն, գլխավոր, առաջատար, միջին եւ կրտսեր խմբերի

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված)

Հարց 11. Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին եւ կրտսեր խմբերի պաշտոններին հավասարեցված պաշտոնների ցանկը սահմանում է

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված)

Հարց 12. Քրեակատարողական ծառայության պաշտոնների բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար սահմանված արդարադատության գեներալ-լեյտենանտ և արդարադատության գեներալ-մայոր կոչումը շնորհում է

Հայաստանի Հանրապետության Նախագահը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված)

Հարց 13. Պետական այլ մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների, դասային աստիճանների, որակավորման դասերի համապատասխանությունը «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կոչումներին սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված)

Հարց 14. Քրեակատարողական ծառայողին ներկայացվող մասնագիտական եւ առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված)

Հարց 15. Քրեակատարողական վարչության պետին պաշտոնում նշանակում եւ պաշտոնից ազատում է՝

Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջարկությամբ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված)

Հարց 16. Քրեակատարողական հիմնարկի վարձու աշխատողներին աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է՝

քրեակատարողական հիմնարկի ղեկավարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված)

Հարց 17. Քրեակատարողական վարչության պետ կարող է նշանակվել այն ծառայողը՝

ով գբաղեցրել է քրեակատարողական ծառայության բարձրագույն կամ առնվազն երեք տարի գլխավոր խմբի պաշտոն եւ ունի արդարադատության գնդապետից ոչ ցածր կոչում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված)

Հարց 18. Քրեակատարողական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար եւ միջին խմբերի պաշտոններում նշանակվող անձանց կրթական մակարդակը

բարձրագույն կրթություն

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված)

Հարց 19. Չինված ուժերի, ազգային անվտանգության, ոստիկանության, դատախազության լիազոր մարմինների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պաշտոնների համապատասխանությունը քրեակատարողական ծառայության պաշտոններին սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված)

Հարց 20. Քրեակատարողական ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի՝

քան մեկ տարի ժամկետով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված)

Հարց 21. Փորձաշրջանի տեղողությունը յուրաքանչյուր ծառայողի համար սահմանում է՝ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված)

Հարց 22. Քրեակատարողական ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է՝ հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված)

Հարց 23. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ քրեակատարողական ծառայողները ենթակա են ատեստավորման ծառայության անցնելուց հետո՝

երկամսյա ժամկետում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված)

Հարց 24. Քրեակատարողական ծառայողի ատեստավորման անցկացման կարգը եւ պայմանները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված)

Հարց 25. Քրեակատարողական ծառայողի վերապատրաստում եւ հատուկ ուսուցում անցնելու կարգն ու պայմանները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված)

Հարց 26. Քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոններում, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների պետերին «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը՝ քրեակատարողական վարչության պետի առաջարկությամբ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված)

Հարց 27. Քրեակատարողական ծառայության կարգապահական կանոնակարգը հաստատում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված)

Հարց 28. Քրեակատարողական ծառայությունում լրացուցիչ աշխատավարձի նկատմամբ հավելումները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված)

Հարց 29. Քրեակատարողական ծառայողի հանդերձանքի նկարագիրը, այն տրամադրելու, կրելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ այն կրելու ժամկետները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված)

Հարց 30. Քրեակատարողական ծառայողին տրվող վկայականի ձեւը եւ տրամադրելու կարգը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված)

Հարց 31. Որ դեպքերում քրեակատարողական ծառայողը կարող է ներգրավվել արտաժամյա ծառայության՝

քրեակատարողական հիմնարկներում օրենքով նախատեսված դեպքերում արտակարգ իրավիճակ հայտարարվելու, ինչպես նաեւ քրեակատարողական ծառայությունում այլ անհետաձգելի կամ հրատապ խնդիրներ առաջանալու դեպքերում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված)

Հարց 32. Քրեակատարողական ծառայողի արտաժամյա ծառայության տեղությունը տարվա ընթացքում չպետք է գերազանցի՝

300 ժամը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված)

Հարց 33. Քրեակատարողական ծառայողների արտաժամյա ծառայության համար վճարվող հավելավճարների չափը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված)

Հարց 34. Որ խրախուսանքի տեսակն է քրեակատարողական ծառայողների նկատմամբ կիրառվում մեկ անգամ՝ ամբողջ ծառայության ընթացքում՝

արտահերթ կոչման շնորհում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված)

Հարց 35. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից նշանակված կարգապահական տույժը կարող է հանել՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված)

Հարց 36. Ով է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի քրեակատարողական ծառայողին որպես խրախուսանք շնորհում արտահերթ կոչում՝

քրեակատարողական վարչության պետը՝ արդարադատության նախարարի համաձայնությամբ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված)

Հարց 37. Որ տույժի տեսակը չի կիրառվում քրեակատարողական վարչության պետի նկատմամբ՝

պաշտոնի իջեցում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդված)

Հարց 38. Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել՝

մեկ կարգապահական տույժ

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 39. Կարգապահական տույժի մասին քրեակատարողական ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝

հնգօրյա ժամկետում

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 40. Քրեակատարողական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ չի կարող նշանակվել, եթե կարգապահական խախտում կատարելու օրվանից անցել է

մեկ տարուց ավելի

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 41. Քրեակատարողական ծառայողը պարտավոր է տալ գրավոր բացատրություններ՝

եթե իր նկատմամբ անցկացվում է ծառայողական քննություն

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 42. Քրեակատարողական ծառայությունում ծառայողական քննություն նշանակելու եւ անցկացնելու կարգը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 43. Ծառայողական քննության ժամանակահատվածում քրեակատարողական ծառայողի լիազորությունները՝

կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդված)

Հարց 44. Քրեակատարողական ծառայողին չեն կարող տրվել այնպիսի բանավոր կամ գրավոր հրամաններ կամ ցուցումներ, որոնք՝

հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին եւ այլ իրավական ակտերին

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդված)

Հարց 45. Քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների համար որն է համարվում պաշտոն զբաղեցնելու սահմանափակ տարիք՝

50 տարեկանը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդված)

Հարց 46. Քրեակատարողական ծառայության որ խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում չեն գրանցվում`

կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնողները

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդված)

Հարց 47. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում ծառայողի միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը`

6 ամիս է, սակայն ոչ ավելի, քան ծառայողի 65 տարին լրանալը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդված)

Հարց 88. Քրեակատարողական ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը սահմանում է`

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդված)

Հարց 49. Ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված կամ փոխադրված քրեակատարողական ծառայողը`

ենթակա է իր ծառայությունում կամ պաշտոնում վերականգնման

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդված)

Հարց 50. Ծառայությունից անհիմն կամ անօրինական ազատված, կոչումը կամ պաշտոնն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում` նրան չվճարված դրամական բավարարման չափով, բայց ոչ ավելի`

քան 3 ամսվա համար

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդված)

Հարց 51. Որ դեպքում քրեակատարողական ծառայողը իրավունք ունի օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ`

անձնական անվտանգության ապահովման համար

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված)

Հարց 52. Քրեակատարողական ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ քրեակատարողական

ծառայությանն անհրաժեշտ զենքի, հատուկ և ինքնապաշտպանական միջոցների տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդված)

Հարց 53. Քրեակատարողական ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է՝

բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների եւ քաղաքացիների համար

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդված)

Հարց 54. Քրեակատարողական ծառայողի օրինական պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝

օրենքով սահմանված կարգով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդված)

Հարց 55. Քրեակատարողական ծառայողի գործողությունները կարող են բողոքարկվել՝

վերադասության կարգով կամ դատարան

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդված)

Հարց 56. Քրեակատարողական ծառայողի կողմից անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդված)

Հարց 57. Քրեակատարողական ծառայողի կողմից հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ հսկողությունը եւ վերահսկողությունն իրականացվում են՝

օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդված)

Հարց 58. Քրեակատարողական ծառայության նյութատեխնիկական ապահովման կարգը և պայմանները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդված)

(ՀՀ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՅ)

Հարց 1. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը քաղկացած է՝

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքից եւ իրավական այլ ակտերից

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 1-ին հոդված)

Հարց 2. Պատիժը կատարելու, ինչպես նաեւ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու հիմքը՝

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կամ որոշումն է, ինչպես նաեւ համաներման կամ ներման ակտը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 4-րդ հոդված)

Հարց 3. Պատիժը կատարելու ընթացքում դատապարտյալի իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել

դատարանի դատավճռով, Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով եւ այլ օրենքներով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 11-րդ հոդված)

Հարց 4. Դատապարտյալի իրավունքները, ազատությունները եւ պարտականություններն իրականացնելու կարգը սահմանվում է՝

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով, ինչպես նաեւ ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 11-րդ հոդված)

Հարց 5. Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող դատապարտյալի իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են՝

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով, այլ օրենքներով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 11-րդ հոդված)

Հարց 6. Որ դեպքերում են ենթակա գրաքննության դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները՝

Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 15-րդ հոդված)

Հարց 7. Պատիժներ կատարող մարմինների եւ հիմնարկների գործունեության նկատմամբ վերադաս մարմինները եւ դրանց պաշտոնատար անձինք իրականացնում են՝

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են գերատեսչական վերահսկողություն

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 19-րդ հոդված)

Հարց 8. Պատիժները կատարելու նկատմամբ հասարակական վերահսկողությունն իրականացվում է՝

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի կազմավորած հասարակական դիտորդների խմբի միջոցով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 21-րդ հոդված)

Հարց 9. Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը՝

Երեք տարի է

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք 21-րդ հոդված)

Հարց 10. Պատիժը կատարող հիմնարկ մուտքի եւ ելքի կարգը սահմանում է՝

պետական կառավարման լիազորված մարմնի ղեկավարը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք 22-րդ հոդված)

Հարց 11. Գատապարտյալի փոխադրումը կատարվում է՝

Պետության հաշվին

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 64-րդ հոդված)

Հարց 12. Գատապարտյալը ուղղիչ հիմնարկ փոխադրվելուց անմիջապես հետո՝

Գրանցվում է դրա համար նախատեսված մատյաններում եւ անհատական քարտերում

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 66-րդ հոդված)

Հարց 13. Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը սահմանվում է՝

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքով եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 72-րդ հոդված)

Հարց 14. Դատապարտյալի հագուստի ձեւը սահմանվում է՝

ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 75-րդ հոդված)

Հարց 15. Դատապարտյալին տրամադրվող հանդերձանքի եւ անկողնային պարագաների չափաբաժիններն ու դրանց օգտագործման ժամկետները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 75-րդ հոդված)

Հարց 16. Դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 76-րդ հոդված)

Հարց 17. Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով, որի չափաբաժինները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 76-րդ հոդված)

Հարց 18. Սննդամթերք եւ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը, ինչպես նաեւ այն առարկաների ցանկը, որոնք արգելված է վաճառել դատապարտյալին, սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 77-րդ հոդված)

Հարց 19. Դատապարտյալի զբոսանքի տեսողությունը չի կարող պակաս լինել՝

Օրական մեկ ժամից

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 78-րդ հոդված)

Հարց 20. Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է՝

տարվա ընթացքում երկու անգամից ոչ ավելի

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 80-րդ հոդված)

Հարց 21. Դատապարտյալին կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու կարգը սահմանվում է՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 81-րդ հոդված)

Հարց 22. Դատապարտյալին արգելված աշխատանքների ցանկը սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 86-րդ հոդված)

Հարց 23. Դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման եւ գործունեության կարգը սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 91-րդ հոդված)

Հարց 24. Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ ազատազրկման դատապարտված անձին կարճատեւ տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում՝

Առնվազն մեկ անգամ՝ մինչեւ չորս ժամ տեւողությամբ

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 25. Համատեղ բնակվելու իրավունքով եւ միայն մերձավոր ազգականների հետ ազատազրկման դատապարտված անձին երկարատեւ տեսակցություն տրամադրվում է՝

Երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչեւ երեք օր տեւողությամբ

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 26. Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տարվա ընթացքում տրամադրվում է՝

Առնվազն երեք կարճատեւ եւ մեկ երկարատեւ տեսակցություն

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 27. Կարճատև եւ երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 28. Ծանրոցները, հանձնուքները, փաթեթներն ու նամակներն ուղարկելու եւ ընդունելու, ինչպես նաեւ դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 29. Կապի միջոցներից, այդ թվում՝ հեռախոսակապից, օգտվելու կարգը եւ քանակը սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 92-րդ հոդված)

Հարց 30. Դատապարտյալը համարվում է տույժ չունեցող՝

Եթե տույժը կրելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, չի ենթարկվել նոր տույժի, կամ նախկինում նշանակված տույժը հանվել է

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 97-րդ հոդված)

Հարց 31. Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել՝

Պատիժները կատարելու նկատմամբ հսկողություն եւ վերահսկողություն իրականացնող մարմիններին

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 97-րդ հոդված)

Հարց 32. Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 98-րդ հոդված)

Հարց 33. Պատժախցում պահվող դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝

Բժշկի եզրակացության հիման վրա

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 98-րդ հոդված)

Հարց 34. Պատիժը կրելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխում է՝

Տեղաբաշխման հանձնաժողովը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 101-րդ հոդված)

Հարց 35. Բաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 103-րդ հոդված)

Հարց 36. Կիսաբաց ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 104-րդ հոդված)

Հարց 37. Կիսափակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 105-րդ հոդված)

Հարց 38. Կիսափակ ուղղիչ հիմնարկում դատապարտյալը կարող է տեղաշարժվել՝

Առնվազն երեք ժամ տեւողությամբ ցերեկային որոշակի ժամերին՝ ուղղիչ հիմնարկի՝ այդ նպատակով նախատեսված տարածքի սահմաններում

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 105-րդ հոդված)

Հարց 39. Բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու պայմանների առանձնահատկությունները սահմանվում են՝

Ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 107-րդ հոդված)

Հարց 40. Դատապարտյալի ներում շնորհելու եւ պատժից ազատելու կարգը սահմանվում է՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 113-րդ հոդված)

Հարց 41. Համաներում կիրառելու կարգը սահմանում է՝

Համաներման ակտն ընդունող մարմինը

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 113-րդ հոդված)

Հարց 42. Յմահ ազատագրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը դատարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացվելուց՝

Երեք տարի անց

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 116-րդ հոդված)

Հարց 43. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը կամ պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը դատարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացնելուց՝

Վեց ամիս անց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 115-րդ հոդված)

Հարց 44. Դատապարտյալի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ուղղիչ հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է՝

Նրա մերձավոր ազգականներին եւ պատժի կատարման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին

(ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 127-րդ հոդված)

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԶԻՅ)

Հարց 1. Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված է համարվում այն հանցանքը, որը`

Սկսվել, շարունակվել կամ ավարտվել է Հայաստանի Հանրապետության տարածքում

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 14)

Հարց 2. Միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում`

Հինգ տարի ժամկետով ազատազրկումը

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 19)

Հարց 3. Ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում`

Տասը տարի ժամկետով ազատազրկումը

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 19)

Հարց 4. Հանցագործությունների ռեցիդիվը վտանգավոր է համարվում` դիտավորությամբ հանցանք կատարելու դեպքում.

Եթե անձը նախկինում երկու անգամից ոչ պակաս ազատազրկման է դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար.

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 22)

Հարց 5. Հանցակցություն է համարվում`

Երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 37)

Հարց 6. Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե`

կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 41)

Հարց 7. Կալանքը չի նշանակվում`

Դատավճիռը կայացնելու պահին 16 տարին չլրացած անձանց նկատմամբ

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 57)

Հարց 8. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝

Մեկից հինգ տարի ժամկետով

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 70)

Հարց 9. Պայմանական վաղաժամկետ ազատում կարող է կիրառվել միայն, եթե դատապարտյալը ծանր հանցագործության համար փաստացի կրել է՝

Նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 76)

Հարց 10. Յմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ վաղեմության ժամկետ կիրառելու հարցը լուծում է՝

Դատարանը

(ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 81)

(«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ»)
ՀՀ ՕՐԵՆՔԻՑ

Հարց 1. Ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են՝

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 4)

Հարց 2. Քննության շահերից ելնելով, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կալանավորված անձը փոխադրվում է՝

Կալանավորված կամ ձերբակալված այլ անձանցից անջատ

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 7)

Հարց 3. Արգելանքի և կալանքի տակ պահելու ժամկետները սահմանվում են՝

Քրեական դատավարության օրենսգրքով

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 8)

Հարց 4. Ձերբակալված և կալանավորված անձանց գրոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել՝

Օրական մեկ ժամից

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 16)

Հարց 5. Ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված հիվանդ անձինք ապահովվում են անվճար հատուկ սննդով, որի տեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 19)

Հարց 6. Ձերբակալված կամ կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը յուրաքանչյուր անձի համար չի կարող պակաս լինել՝

Չորս քառակուսի մետրից

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 20)

Հարց 7. Կալանավորված անձի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 24)

Հարց 8. Կալանավորված անձի կատարած աշխատանքից ստացված եկամուտը,
օրենքով նախատեսված պահումները կատարելուց հետո, փոխանցվում է՝

Նրա անձնական հաշվին

(«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին»
ՀՀ օրենք, հոդված 24)